




USAID
FROM THE AMERICAN PEOPLE



**Մրցակցային առավելությունների
մասնակցային գնահատում**

Սևբար, Լուսաձոր, Դիտավան համայնքներ

PRP



*Այս հետազոտությունը ստեղծվել է
Ամերիկայի ժողովրդի
աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության
/ԱՄՆ ՄՁԳ/ միջոցով:
Հետազոտության
բովանդակությունը միմիայն
հեղինակներին է և պարտադիր չէ,
որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ
ԱՄՆ կառավարության
տեսակետները:*

. . . թե մի քանի տարի առաջ այստեղ մարդիկ հիմնականում արտագնա աշխատանքի համար հարմար տեղ էին փնտրում, ապա հիմա՝ արքայանարնջի որակյալ տնկի, ջերմոցի թաղանթ կամ ոռոգման ջուրը գյուղ հասցնելու ուղի . . .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերլուծություն իրականացնող կառույց	3
Սևքար, Դիտավան և Լուսաձոր համայնքներ. մրցակցային առավելություններ.....	4
Սևքար.....	5
Լուսաձոր	6
Դիտավան	6
1. Այգեգործություն	7
Ա. Ճյուղի նկարագիրը	7
Բ. Պահանջարկը և շուկան	8
Գ. Հարակից և օժանդակող ճյուղերը	8
Դ. Գործոնների որակը այգեգործության մեջ.....	9
Ե. Նախաձեռնություններ այգեգործության զարգացման ուղղությամբ	10
2. Ջերմոցային տնտեսություններ	11
Ա. Ընդհանուր բնութագիր.....	11
Բ. Պահանջարկը և շուկան	11
Գ. Հարակից և օժանդակող ճյուղեր.....	12
Դ. Ջերմոցային տնտեսությունների համար անհրաժեշտ գործոնների որակը	12
Ե. Առաջարկություններ ջերմոցային տնտեսությունների զարգացման համար.....	13
3. Անասնապահություն	13
Ա. Ճյուղի նկարագիրը	13
Բ. Կաթնամթերի և մսամթերքի պահանջարկը.....	14
Գ. Հարակից ու օժանդակող ճյուղեր	14
Դ. Արտադրական գործոնների որակը	15
Ե. Առաջարկություններ անասնապահության զարգացման ուղղությամբ.....	15
4. Դաշտավարություն.....	16
Ա. Սշակաբույսերի արդյունավետության համեմատական վերլուծություն.....	17
Բ. Նախաձեռնություններ դաշտավարության զարգացման ուղղությամբ.....	18

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեզրեցումների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Սևքար, Դիտավան և Լուսաձոր համայնքներ . մրցակցային առավելություններ

Իջևանից դեպի սահման գյուղեր են: Դեռևս տասը տարի առաջ այս հատվածը համարվում էր Հայաստանում ամենաաղքատը: Տարբեր հայկական և միջազգային կազմակերպություններ իրենց ջանքերը կենտրոնացրեցին այստեղ, իսկ տարածքի աշխատասեր մարդիկ օգտվեցին ընձեռված հնարավորություններից, ու սկսվեց զարգացման բարդ, բայց արժանավայել ուղին: Ու թե մի քանի տարի առաջ այստեղ մարդիկ հիմնականում արտագնա աշխատանքի համար հարմար տեղ էին փնտրում, ապա հիմա՝ արքայանարինջի որակյալ տնկի, ջերմոցի թաղանթ, ռոռզման ջրագիծը տարածելու ուղի...

Եվ երբ ուղղակի անցնում ես այս գյուղերով, արդեն առաջին հայացքից զարգացումը տեսանելի է: Ու վարակիչ:

Դիտարկվող Սևքար, Լուսաձոր, Դիտավան համայնքներում որոշ մրցակցային առավելություններ պայմանավորում են ոչ միայն անցյալ զարգացման պատմությունը, այլ նաև առաջիկա ընթացքը՝

- բնակլիմայական պայմանները հիանալի են այգեգործության համար, անգամ՝ մերձարևադարձային մրգերի:
- Լուսաձորում և Դիտավանում ռոռզման ջրի ցանցը ընդլայնվում է, որը աստիճանաբար խթանում է այգեգործությունը:
- Ջերմոցային տնտեսությունների զարգացման փորձ կա, որը տարածվում է, և բազմաթիվ մարդիկ այս համայնքներում նոր ջերմատներ հիմնելու պլաններ ունեն: Լուսաձորում և Դիտավանում է կուտակված Տավուշի մարզի ջերմոցների գործարկման գիտելիքը :
- Տարբեր միջազգային կազմակերպություններ աշխատում են այս հատվածում, ընդ որում՝ իրականացնում են տնտեսական զարգացման ծրագրեր:
- Գյուղերը անտառամերձ են, և մարդիկ օգտագործում են այս հնարավորությունը: Անտառի հատապտուղները և հոնը իրացվում են և՛ թարմ վիճակում, և՛ որպես օդի: Դիտավանը հոնի օդու լավագույն արտադրողի համարում ունի:
- Անտառը նաև փայտածուխի արտադրման համար ռեսուրս է ապահովում, որը հատկապես Սևքարի երիտասարդության եկամտի աղբյուրներից է:
- Հեռագնա արոտների և խոտհարքերի առկայությունը և գյուղերին համեմատաբար մոտ լինելը հնարավորություն են ստեղծում նաև անասնապահության զարգացման համար:
- Տարածքը հարուստ է պատմամշակութային և բնական հուշարձաններով, որը գյուղական տուրզմի զարգացման հնարավորություն է ստեղծում:

Ստորև գյուղերի այլ առավելությունների և առանձնահատկությունների մասին՝ համառոտ և առանձին:

Սևքար

Սևքարն ունի ավելի քան 2000 բնակիչ: Գյուղը հայտնի մարդիկ շատ է ունեցել: Հիմա էլ բազմաթիվ սևքարցիներ գիտության և մշակույթի, ռազմական գործի ու պետական կառավարման համակարգերում սկզբունքային դերակատարում ունեն: Շատ են նաև Հայաստանից դուրս հաջողության հասած մարդիկ, ովքեր օգնում են գյուղին ֆինանսապես, իսկ բազմաթիվ գյուղացիներ արտագնա աշխատանքի են մեկնում և աշխատում նրանց ձեռնարկություններում:

Գյուղի ժողովուրդը եկամտի տարբեր աղբյուրներ ունի:

Ավանդաբար անասնապահությունը Սևքարի բնակչության եկամտի հիմնական աղբյուրներից է: Ինչպես նախախորհրդային, այնպես էլ խորհրդային տարիներին մարդիկ հիմնականում աշխատել են համայնական դաշտերում ու այգիներում, ինչպես նաև ֆերմաներում: Զուգահեռ բոլորը պահել են իրենց մի քանի անասունը՝ ընտանիքի կարիքները հոգալու համար: Ավելացած կաթից պանիր են արտադրել ու վաճառել քաղաքներում ապրող նախկին հարևաններին, բարեկամներին: Հիմա էլ անասնապահությունը զարգացած է: Սակայն այն ապահովում է զբաղվածություն հիմնականում տարիքով մարդկանց համար: Անասունների գլխաքանկը չի աճում. երիտասարդները այլ զբաղվածություն են գտնում և նախընտրում են ավելի եկամտաբեր աշխատանք:

Անտառը գյուղի երիտասարդների զբաղվածության հիմնական աղբյուրն է: Փայտահատությունն ու վաճառքը, ինչպես նաև փայտածուխի արտադրությունը անհամեմատ ավելի մեծ եկամուտներ են ապահովում, քան գյուղատնտեսությունը: Եվ երիտասարդությունն էլ ձգտում է կա՛մ զբաղվել անտառով, կա՛մ արտագնա աշխատանքի մեկնել:



Այգեգործությունն էլ կտրուկ կրճատվել է խորհրդային տարիներից հետո՝ պայմանավորված ոռոգման ջրի մատակարարման խափանմամբ: Հիմա աստիճանաբար մի քանի հեկտարի վրա այգիներ են տնկվում՝ դեղձ, արքայանարինջ, թուզ, անգամ կաթիլային ոռոգման օրինակներ կան: Բայց ոռոգման ջրի պակասը զսպում է այգեգործության զարգացումը:

Ընդհանուր առմամբ, Սևքարը դինամիկ փոփոխվող համայնք է: Տնտեսության ավանդաբար զարգացած ճյուղերը փոխարինվում են նորերով, մարդիկ, մնացած համայնքներից ավելի շատ, տեղափոխվում են

մայրաքաղաք և արտերկիր, այնտեղ հաջողության հասնում, բայց պահում են գյուղի մարդու ոգին ու կապվածությունը:

Լուսաձոր

Լուսաձորը Աղստևի հովտում է, Իջևանից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա, արևաշատ լեռների լանջին: Գյուղը փոքր է: Ունի վեց հարյուրին մոտ բնակչություն: Բայց, դրանով հանդերձ, տնտեսությունը համեմատաբար բազմազան է՝ այգիներ, ծխախոտ, անասնապահություն, ցորեն, ջերմոցներ, անտառից՝ հավաքչարարություն և այլն:

Խորհրդային տարիներին և դրանից առաջ գյուղում մարդկանց հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր ու դրան օժանդակող մշակաբույսերի աճեցումը: Այգեգործությունը զարգացած չէր, ջերմոցներ ընդհանրապես չկային:

Բայց փոխվում է տնտեսությունը: Մի քանի աջակից կազմակերպությունների կողմից ստանալով առաջին տնկիները, փոքր ջերմատները և ոռոգման ջուրը՝ մարդիկ աստիճանաբար անցում են կատարում դեպի այգեգործությունն ու ջերմատներում բանջարեղենի աճեցումը: Կրճատվում է անասնապահությունը. երիտասարդությունը էլ սար չի գնում, գերադասում է հողագործությունը: Անգամ հեռվից որ նայում ես գյուղին, համատարած ջերմոցներ են: Սկսել են ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) ու Հայաստան Համահայկական Հիմնադրամի (ՀՀՀ) հետ, հիմա ինքնուրույն են կառուցում, աճեցնում ու վաճառում, հարևան համայնքներին էլ խորհուրդներ են տալիս ու օրինակ ծառայում:

Աշխատատող է գյուղացին Լուսաձորում: Ամբողջ օրը, առավոտից մինչև ուշ երեկո աշխատում է, որ արդյունք ստանա: Միաժամանակ սովորում է գյուղացին: Եթե Տավուշի շատ համայնքերի համար այգեգործությունը ավանդական ճյուղ էր, ապա այստեղ մարդիկ նոր են սովորում, իսկ սա ունի իր առավելությունը՝ հին գիտելիքն ու փորձը չեն խանգարում զարգանալ:

- Ես պանիրս առած դեսուդեն եմ ընկնում, որ ծախեմ, իսկ հարևանիս դռնից թուզը խնդրում են,- պատմում է գյուղի ֆերմերներից մեկը,- դրա համար էլ որոշել եմ աստիճանաբար այգեգործության մեջ խորանալ ու մեկ հատ էլ ջերմոց կառուցել: Անասնապահությունը ձեռք չի տալիս:

Դիտավան

Դիտավանը բարձր ժայռերի վրա է: Ճանապարհին ոլորաններ են՝ կիսաքանդ ու քարքարոտ: Հիմա գյուղի հիմնական խնդիրը ճանապարհն է: Ամեն ամիս գյուղապետը դիմում է կառավարությանն այս հարցով, բայց վերջին քսան տարիներին դեռ դրական պատասխան չկա: Բայց գյուղի բնակչությունը հույսով սպասում է:

Դեռ հեռվից երևում են նորատունկ այգիները, խաղողի տնկարկները: Մարդիկ ավելացնում են այգիները քանակը: Ռոռզման ջրագիծն աստիճանաբար հասնում է վարելահողերին, գյուղացին էլ ցորենի ու արևածաղիկի փոխարեն սկսում է այգիներ տնկել՝ արքայանարինջ, թուզ:

Տների մոտ կուտակված խոտի դեզեր կան: Գյուղը նաև անասնապահությամբ է զբաղվում: Ամեն տուն մեկ- երկու կով ունի՝ ընտանիքի կարիքների համար: Մեծ ֆերմերներ գրեթե չկան:

Շատ են ջերմոցները, հեռվից նայում ես՝ մոտ քսան հատ հնարավոր է հաշվել: Միջազգային բարեգործական մի քանի կազմակերպություն այս ջերմոցները նվեր են սվել: Մարդիկ կանաչի, լոլիկ, վարունգ ու պղպեղ են աճեցնում, վաճառում Իջևանի գյուղատնտեսական շուկայի վերավաճառողներին:

Տարբեր տների բակերում մեղվի փեթակներ կան, մարդիկ էլ՝ մեղվի պես ժրաջան աշխատում են:

Գյուղը անտառի պոնկին է: Անտառն անհասանելի ժայռերի վրա է, և գյուղի բնակչությունը գոհ է դրանից: Ծառերը քիչ են կտրում, ու անտառն էլ վարձահատույց է լինում վայրի հատապտուղներով ու մրգերով. գյուղի բնակիչները հավաքում են, իրացնում կամ պահածոյացնում՝ ձմռանը հոգավով ընտանիքի հոգսը: Հոնի օդին Դիտավանի հայտնի ապրանքանիշն է:

Հայաստանի այս հատվածում խոնավությունը շատ է: Կլիման նպաստավոր է նաև ծխախոտի, եգիպտացորենի համար:

1. Այգեգործություն

Ա. Ճյուղի նկարագիրը

Լուսածորքում և Դիտավանում այգեգործությունը սկսել է զարգանալ վերջին տասը տարիներին: Հիմնականում արքայանարինջի և թզի այգիներ են, ունեն նաև հոն, տանձ, խնձոր: Գյուղից դուրս այգիները դեռևս քիչ են, փոխարենը տնամերձերում միայն այգիներ են: Այստեղ և՛ ջրելն է հեշտ, և՛ խնամելը: Տարիներ առաջ, երբ գյուղում դեռ այգիներ չկային, ՄԱԶԾ- ն ու ՀՀՀ- ն տնկիներ բաժանեցին բոլոր ցանկացողներին: Այսպես սկսվեց զարգացումը: Չորս տարի հետո սկսեցին բերք ստանալ, որը խթանեց նոր այգիների տնկումը՝ արդեն ամբողջությամբ սեփական միջոցներով և նախաձեռնությամբ:

Այգեգործության մեջ գիտելիքներ ու փորձ չունենին: Օգնության հասան հմուտ գյուղատնտեսներն ու ԳԱՄԿ-ը: Այլ հարևան համայնքներից էլ սովորեցին: Հիմա դեռ դժվարանում են որոշ ծառերի պատվաստումն ու էտումն իրականացնելիս: Ասում են, որ պտղավանցիք ինչ- որ ձևով պատվաստում են ծառերը ու իրենց մինչև վերջ գաղտնիքը չեն բացում:

Առանձնապես չեն պատկերացնում, թե մրգերի ո՛ր սորտերը, ո՛ր տնկիները ավելի արդյունավետ կլինեն իրենց հողի և կլիմայի պայմաններում: Նման գիտելիքի կրողը չկա տարածաշրջանում: Բայց արդեն

տնկածը պարտաճանաչ խնամում են՝ օգտվելով ԳԱՄԿ-ի խորհրդատվական գրքույկներից, հարցնելով հարևաններին ու ծանոթներին:

Սևքարում պատկերը այլ է: Խորհրդային շրջանում այստեղ զարգացած այգեգործություն կար, սակայն ոռոգման ջրագծերի խափանումը վերացրեց այն, թողնելով միայն տնամերձ այգիները, որոնք ջրվում են խմելու ջրով:

Ստորև ներկայացված աղյուսակում մրգերի բերքատվության և շահութաբերության համեմատական վերլուծությունն է՝ ամբողջությամբ բերքատու այգու մեկ հեկտարի հաշվարկով:

1	Պտղի անվանումը	Դեղձ	Խնձոր	Արքայա-նարինջ
2	1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	20 000	25 000	25 000
3	1 կգ-ի միջին մեծածախ գինը (2010-2014)	150	120	150
4	1 հա-ից ստացված եկամուտը ('2'x'3')	3 000 000	3 000 000	3 750 000
5	Կատարված ուղղակի ծախսերը	800 000	420 000	300 000
6	Եկամուտ՝ հանած ուղղակի ծախսեր	2 200 000	2 580 000	3 450 000

Եթե հաշվի առնենք նաև սկզբնական ներդրումների մեծությունը, ապա այստեղ լավագույն արդյունք ունենք արքայանարինջի արտադրությունից:

Բ. Պահանջարկը և շուկան

Մրգերի իրացումը գյուղացին խնդիր չի համարում: Դեռ ավելին: Եթե կաթի, պանրի ու մսի մասով իրացման խնդիրները շատ են, ապա այստեղ գնորդները գալիս են գյուղ, մարդիկ էլ հանձնում են միրգը: Ավելի լավ վաճառվում են արքայանարինջը, թուզը: Արքայանարինջը նաև փորձում են պահել՝ վաճառելու համար ձմռանը: Գյուղացիներից ոմանք, որ մեքենա ունեն, միրգը տանում են Գեղարքունիքի քաղաքները, փոխանակում կարտոֆիլի, պանրի հետ:

Լուսաձորում մեկ օրինակելի սառնարան կա ՄԱԶԾ կողմից կառուցված, որը, սակայն, շատ փոքր է գյուղի համար:

Թարմ ու պահպանված մրգի աճող պահանջարկը մարդկանց մղում է նոր ներդրումների այս ոլորտում՝ սահմանափակելով անասնապահության աճի հնարավորությունը:

Գ. Հարակից և օժանդակող ճյուղերը

Լուսաձորում ՄԱԶԾ ջանքերով կառուցվել է "համայնքային խոհանոց", որը ներառում է չրագործության, պահածոյագործության սարքավորումներ և սառնարան: Այս կենտրոնը հիմա մասնակի է գործում, թեկուզև բոլոր սարքավորումները տեղում են: Պատճառը, հավանաբար, կազմակերպման ձևն է, որն ի

սկզբանե կոոպերատիվի կարգավիճակ է ունեցել: Գյուղացիները անհատական մասնավոր սեփականությունը ավելի արդյունավետ ձև են համարում:

Հիմա բրիտանական Oxfam- ի աջակցությամբ Սևքարում կառուցվում է մրգերի պահածոյացման արտադրամաս: Մյուս տարվանից այն կգործարկվի, կսկսեն միրգ մթերել: Մակայն այստեղ նույնպես ընտրվել է կոոպերատիվի տարբերակը, որը, մեր կարծիքով, կառավարման լավագույն տարբերակը չէ, և կարիք կա վերանայել այն:

Մեր հարցազրույցներում մարդիկ կարևորում էին և՛ սառնարանների, և՛ չորանոցների դերը, ու շատերը հակված են ներդրումներ անել այս ոլորտներում՝ իրենց աճեցրած մրգի արժեքն ավելացնելու համար:

Իհարկե, դրա համար լրացուցիչ օժանդակության կարիք կա, քանի որ սարքավորումների տեղադրման, օգտագործման, տեխնոլոգիաների կիրառման փորձի պակաս կա, և գյուղացուն պետք է օգնել՝ նվազեցնելու համար սկզբնական սխալներն ու թափոնը:



Գյուղերի եկամուտների մեջ զգալի կշիռ ունի նաև մրգային օղիների արտադրությունն ու վաճառքը: Հոնի օղու մեկ լիտրը գյուղացիները իրացնում են 4000-5000 դրամի սահմաններում, տանձինը՝ մոտ 2000, որի օգնությամբ լուծում են չիրացվող մրգի պահպանման խնդիրը:

Դիտավանում, որը հոնի օղու արտադրության առաջատարներից է Հայաստանում, գրեթե ամեն տնտեսություն ավելի քան հինգ հարյուր հազար դրամ եկամուտ ունի անտառային բարիքների և դրանից ստացվող օղու իրացումից:

Դ. Գործունեների որակը այգեգործության մեջ

Գյուղերում կլիման բարենպաստ է այգեգործության համար: Այստեղ ցրտահարությունը բացառիկ երևույթ է, թեկուզև այս տարվա գարնանը այգիների և բերքի մեծ մասը տուժել է դրանից: Հազվադեպ է նաև կարկուտը: Տաք ամառը և չափավոր ցուրտ ձմեռը նույնպես նպաստում են այգեգործության զարգացմանը, անգամ՝ մերձարևադարձային մրգերի գծով:

Ճանապարհների վիճակը նույնպես բարվոք է, առկա է գազի և էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում,

Սևքար. այգիներ առանց ջրի

Արմենը Սևքարում նոր այգի է տնկել՝ արքայանարնջի ու թզի: Այս տարի այգու ծառերի կեսը ցրտահարվել է. մյուս տարի բերք կտային: Բայց նա հիմա կրկին ծառեր է տնկում ու սպասում է բերքին՝ չորս- հինգ տարուց: Այգու ներքևի ձորակով փոքր առվակ է հոսում, որը ջրի հիմնական աղբյուրն է, այն էլ՝ տարվա մի մասը ցամաքում է:

Այգու տարածքից Արմենը տարին մի քանի անգամ խոտ է քաղում, վաճառում՝ փոքր- ինչ փոխհատուցելով ցրտահարության վնասը:

Հարևաններից մեկը կաթիլային ոռոգում է անցկացրել: Արմենն էլ տեսել ու որոշել է իր այգում նույնպես դա կիրառել:

Արմենի այգին կարևոր է. բոլորը սպասում են, տեսնեն՝ կստացվի՞:

որը կարող է օգտագործվել մրգերի հետագա վերամշակման և պահպանման համար:

Տնամերձ այգիները հիմնականում ապահովված են ջրով:

Լուսաձորի "վերևի թաղը" ջրի խնդիր ունի, որը հնարավոր է լուծել սարի աղբյուրներից ջուրը գյուղ հասցնելով: Գետի ջուրը գրեթե ամբողջությամբ օգտագործվում է ոռոգման համար:

Դիտավանում ոռոգման ջուրը աստիճանաբար հասնում է վարելահողերին: Այստեղ լրացուցիչ ոռոգման ջրագծի կարիք կա, որը գյուղին կից մոտ քսան հեկտար վարելահողը ջրովի կդարձնի և կնպաստի այգեգործության զարգացմանը:

Սևքարը ոռոգման ջուր չունի: Հիմա մոտ տասնհինգ կիլոմետր հեռավորությունից սկսել են ջրագծի կառուցումը, որը, սակայն, միայն տնամերձերի հարցը կլուծի:

Այգեգործության համար անհրաժեշտ օժանդակությունն ու գիտելիքը գյուղացիները մինչև այժմ ստացել են ՄԱԶԾ- ից, ՀՀՀ- ից, ԳԱՄԿ- ից: Բայց հիմա խնդիր կա նոր գիտելիքների և կարողությունների ստացման, քանի որ արդեն այգիները մեծ են, խնդիրները՝ այլ: Հաճախ այգեգործները չեն կարողանում տարրական գիտելիքները ձեռք բերել ծառերի էտման ու պատվաստման գծով:

Կառավարությունը այգիների կառուցման և ավելացման հատուկ ծրագրեր չունի: Մարդիկ լսել են "Հայաստանի միրգ" ՓԲԸ գործունեության մասին, բայց իրենց կամ մոտակա համայնքներում այն գործունեություն չի իրականացնում:

Գյուղատնտեսության՝ հարկերից ազատված լինելու փաստը մեծապես նպաստում է այգեգործության զարգացմանը:

Ե. Նախաձեռնություններ այգեգործության զարգացման ուղղությամբ

- Լուսաձորի սարի աղբյուրներից ոռոգման ջրագծի անցկացում գյուղ, որը հնարավորություն կտա ջրել գյուղի "վերի թաղի" տնամերձերը՝ նպաստելով այգեգործության և ջերմոցների զարգացմանը:
- Դիտավանի 50 հեկտար վարելահողերի ուղղությամբ ոռոգման ջրագծի կառուցում:
- Սևքարի <<Ջամլու>> տեղամասում ջրագծի վերանորոգում:
- Ծառերի էտի, պատվաստման, ընդհանուր այգեգործության ուղղությամբ դասընթացներ գյուղացիների համար, նոր տեխնոլոգիաների և գործիքների ուղղությամբ աջակցություն:
- Զրագործության ամբողջական ծրագիր՝ բիզնես պլանավորման, տեխնոլոգիաների ուսուցման և ֆինանսավորման բաղադրիչներով:
- Մառնարանների ստեղծման աջակցություն՝ տեխնոլոգիաների և ֆինանսավորման տեսքով:
- Օժանդակություն գյուղից դուրս առկա ոռոգովի հողատարածքներում նոր այգիների կառուցման ուղղությամբ՝ կաթիլային ոռոգմամբ ու հակակարկտային ցանցերով:

- Աջակցություն Սևքարի մրգերի ու հատապտուղների վերամշակման արտադրամասին (կոոպերատիվ)՝ մրգերի չորացման սարքավորումների ձեռքբերման և չորանոցի ստեղծման ուղղությամբ:

2. Ջերմոցային տնտեսություններ

Ա. Ընդհանուր բնութագիր

Դեռևս տասը տարի առաջ երեք գյուղերում էլ չկային ջերմոցներ: Ամեն ինչ սկսվեց ՄԱԶԾ մի ծարգրից, որի շրջանակներում Լուսաձորի բոլոր ցանկացողներին տվեցին ջերմոց պայմանով, որ կառուցման ընդհանուր արժեքի տասը տոկոսը սեփականատեր գյուղացին կտա, իսկ մնացած մասը գրանտ էր: Այսպես կառուցվեցին առաջին տասը ջերմոցները: Ապա՝ ևս տասը: Հետո նույնը արվեց Դիտավանում: Հիմա հերթը Սևքարինն է: Այստեղ առաջին ջերմոցը արդեն կառուցել են: Սկզբում մարդկանց համար դժվար էր մշակելը, գիտելիքի ու փորձի պակաս կար: Հետո, աստիճանաբար, իրենք սկսեցին կառուցել նոր ջերմոցներ՝ ամբողջությամբ իրենց ուժերով: Գյուղացիներից մեկն ասում է, որ հիմա ինքը շատ ավելի լավ է կառուցում ջերմոցը, քան դա ժամանակին արվել է աջակցության ծրագրով: Արդեն հասկանում են և՛ հիվանդություններից, և՛ պարարտացումից, և՛ կառուցումից ու վաճառքից:

Լուսաձորի ջերմոցատերերը հպարտությամբ նշում են, որ իրենց աճեցրած բանջարեղենը ավելի որակյալ է, քան Արարատյան դաշտինը, քանի որ իրենց հողն ու արևը ուրիշ են, ջուրը բարեբեր է, իսկ իրենք էլ պարարտանյութեր գրեթե չեն օգտագործում: Անգամ արտաքինից Լուսաձորի բանջարեղենը տարբերվում է վառ գույներով և առողջ տեսքով:

Իհարկե, ինչպես նշեց փորձառու գյուղատնտեսներից մեկը, Արարատյան դաշտի ջերմոցատերերը դեռևս ավելի շատ են պատկերացնում և ավելի փորձառու են:

Հիմա գյուղերի ավելի քան հիսուն փոքր ջերմոցներում աճեցվում են լոլիկ, վարունգ, պղպեղ, լոբի, կանաչիներ: Հատկապես մեծ ծավալ են կազմում լոլիկն ու վարունգը:

100 քմ արտադրական տարածք ունեցող ջերմոցը միջին հաշվով ապահովում է տարեկան 400 - 600 հզ. դրամ շահույթ (հաշվարկված չէ ձմեռվա ամիսներին ջեռուցման և բերքի ստացման դեպքում):

Բ. Պահանջարկը և շուկան

Բոլոր ջերմոցային տնտեսությունները իրենց աճեցրած բանջարեղենն ու կանաչին իրացնում են Իջևանի շուկայում: Նրանք պնդում են, որ պահանջարկն այնքան մեծ է, որ անգամ եթե տասնապատկեն ծավալները, էլի իրացման խնդիր չեն ունենա: Լուսաձորի ու Դիտավանի բանջարեղենը լավ համբավ ունի և, թեկուզև փոքր-ինչ թանկ, Իջևանի շուկայում առաջնայինը իրացվում է հենց իրենց արտադրանքը: Պահանջարկի նման դինամիկան խթանում է ջերմոցագործությունը ոչ միայն այստեղ, այլ նաև մարզի այլ համայնքներում:

Գ. Հարակից և օժանդակող ճյուղեր

Ջերմոցային տնտեսությունների գործունեության համար Տավուշի մարզում դեռևս ստեղծված չեն անհրաժեշտ պայմանները: Սաձիլների, դեղորայքի, պարարտանյութերի, խորհրդատվության համար մարդիկ հասնում են Երևան: Նույնը վերաբերում է նաև ջերմոցային տնտեսությունների կառուցման համար անհրաժեշտ պարագաներին՝ թաղանթ, խողովակներ, կաթիլային ոռոգման համակարգեր և այլն:

Սակայն տնտեսությունների քանակի աստիճանական աճը գործարարներին հուշում է աստիճանաբար սկսել ջերմոցային տնտեսությունների գործունեության համար տարատեսակ պարագաների մատակարարումը: Մեկը Վրաստանից թաղանթներ է ներկրում և վաճառում, մեկը՝ կաթիլային ոռոգման համակարգեր: Ուղղակի այս ամենը հատվածային է և ոչ համակարգված:

Անհրաժեշտություն կա Տավուշի ջերմոցային տնտեսությունների համար ռեսուրսային կենտրոնի, որտեղից մարդիկ կստանան անհրաժեշտ տեղեկատվությունը, ձեռք կբերեն նյութերը, սաձիլներն ու պարագաները:

Լուսաձորում սկսում են բանջարեղենի սաձիլների արտադրությունը: Մարդիկ այն կարծիքին են, որ այլ վայրերից ձեռք բերված սաձիլները տարածք են բերում տարբեր հիվանդություններ: Հիմա աստիճանաբար սկսում են ինքնուրույն արտադրել սաձիլները: Այս ոլորտում և՛ ֆինանսական, և՛ խորհրդատվական աջակցության կարիք կա:

Դ. Ջերմոցային տնտեսությունների համար անհրաժեշտ գործունեի որակը

Տավուշի մարզը հիանալի հնարավորություններ է ապահովում ջերմատների զարգացման համար: Ե՛վ բնակլիմայական պայմանները, և՛ ոռոգման ջրի կառավարման համեմատաբար կայուն համակարգը գյուղերում խթանում է դրանց կառուցումը:

Մյուս կողմից էլ այս ոլորտում նկարտվում է տարբեր աջակից կազմակերպությունների ակտիվություն՝ ՀՀՀ, ՄԱԶԾ, ՓՄԶ ԶԱԿ, Օքսֆամ, Վորլդ Վիժն, Մահման Հիմնադրամ և այլն: Այս կազմակերպությունները տրամադրում են խորհրդատվություն, սաձիլներ, փոքր գրանտներ, կառուցման աջակցություն, ֆինանսավորում և այլն:

ԳԱՄԿ-ը մի քանի տարի առաջ հրատարակել է խորհրդատվական գրքուկներ, որոնցից օգտվում են գյուղացիները՝ այս կամ այն բույսն աճեցնելիս:

Փոքր ջերմատները հարկային դաշտում չեն գործում, ինչը ավելորդ բարդություններից ազատում է գյուղացուն:

Բանկային համակարգը և վարկային կազմակերպությունները, ինչպես ամենուր, բարձր տոկոսադրույքով վարկեր են տրամադրում, որը ձեռնտու չէ նման տնտեսական գործունեության համար: Բացառություն են միայն պետության կողմից սուբսիդավորվող գյուղատնտեսական վարկերը:

Ե. Առաջարկություններ ջերմոցային տնտեսությունների զարգացման համար

- Տավուշի մարզում ջերմատների համար ռեսուրսային կենտրոնի հիմնում, որտեղ գյուղացին կարող է ստանալ խորհրդատվություն, սարքավորումներ, դեղորայք, սածիլներ և այլն:
- Ջերմոցային տնտեսությունների զարգացման ամբողջական մոդելի կիրառում՝ սկսած խորհրդատվությունից մինչև հասանելի վարկերն ու գրանտային ծրագրերը, ինչպես դա արվել է Պտղավանում, Տավուշում, Կոթիում ՄԱԶԾ, Գեղարքունիքի ԱԱՊ և ՓՄՁ ԶԱԿ համագործակցությամբ:
- Աջակից կազմակերպությունների համակարգում՝ աշխատանքը չկրկնելու և սիներգիա ստանալու համար այնպես, որ ամեն մի կազմակերպություն դառնա ընդհանուր աջակցության ռազմավարության մաս՝ հիմնավորված իր ուժեղ կողմերով:
- Փոքր ջերմատների ջեռուցման համակարգերի մոդելների մշակում և ներկայացում՝ համապատասխան հաշվարկներով: Աջակցություն ջերմոցատերերին՝ ջեռուցման համակարգերի տեղադրման ուղղությամբ:

3. Անասնապահություն

Ա. Ճյուղի նկարագիրը

Անասնապահությունը Հայաստանի այս հատվածի տնտեսության ավանդական ճյուղն է: Անգամ հիմա էլ տարիքն առած մարդիկ ամբողջ օրը զբաղված են անասուններին արոտ տանելով, կերակրելով, կթելով, կաթը՝ պանիր սարքելով: Վաղ գարնանն էլ իրենց ու հարևանների կովերն ու ցուլիկները հավաքում, սար են բարձրանում՝ հեռագնա արոտ: Ու այնտեղ են մնում հինգ- վեց ամիս:

Կիրառվում են անասնապահության ավանդական եղանակներ: Մի քանի տարի առաջ Վորլդ Վիժն կազմակերպությունը և Տավուշ հիմնադրամը փորձել են փոխել անասունների տեսակը՝ գյուղի մի քանի բնակչի նվիրելով ջերսի տեսակի կովեր և առաջարկելով արհեստական սերմնավորման սարքավորումներ և հնարավորություն: Կովերը մեծ էին, արոտ դժվար էին գնում: Ու մի քանի տարում այս նոր անասունների կաթնատվությունն էլ նվազեց, ոտքերը վնասվեցին քարքարոտ տեղանքից, իսկ արհեստական սերմնավորումը քչերն օգտագործեցին. նախրի մեջ ցուլիկներ կային ու խանգարում էին սերնդի պլանավորմանը¹:

¹ Միայն Դիտավանում են կիրառում արհեստական սերմնավորում և արդյունքներն արդեն ակնհայտ են:

Արդյունքում հիմա ո՛չ արհեստական սերմնավորման սարքավորումները կան, ո՛չ ջերսի տեսակի կովերը: Իհարկե, Տավուշ հիմնադրամը առանձին գոմում պահում է դրանք, բայց գյուղացուն այլևս հասանելի չէ:

Երեք համայնքներում առկա են 2100 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որոնցից մոտ 1040 -ը կովեր են: Միջին կաթնատվությունը մեկ կովի հաշվարկով 1800 - 2000 լիտր / տարի է: Ստորև ներկայացված է ֆերմերների բաշխվածությունը ըստ պահվող անասնազվաքանակի:

	Քանակ / հոգի
Խոշոր (25 և ավել գլուխ)	31
Միջին (10 -25 գլուխ)	15
Փոքր (մինչև 10 գլուխ)	տնտեսությունների 70 % - ը

Արդեն սկսվել է ֆերմերային տնտեսությունների խոշորացում, որը հանգեցնում է դրանց արդյունավետության բարձրացմանը:

Բ. Կաթնամթերի և մսամթերքի պահանջարկը

Լուսաձորի, Դիտավանի ու Սևքարի հատվածում կաթի մթերման կետեր չկան: Իջևանի շուկայում և հարևաններին կաթը կարելի է վաճառել 200-250 դրամով: Իհարկե, սահմանափակ քանակությամբ: Մեծ արտադրողները քիչ են: Ամենամեծ տնտեսությունները ունեն մոտ 40- 50 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Նրանք էլ կաթից պանիր են պատրաստում հեռագնա արտոնելու կամ գյուղում: Ունեն գնորդներ, պանիրը իրացվում է: Ֆերմերները հիմնականում բողոքում են պանրի գնից և գնորդ-միջնորդների թելադրող դիրքից: Ե՛ւ կաթի, և՛ պանրի գները վերջին երեք տարիներին հիմնականում անփոփոխ են, իսկ օգտագործվող հումքը, վառելիքը, ռեսուրսները թանկանում են: Մարդիկ ավելի հակված են անասնապահությունը փոխարինել այգեգործությամբ և ջերմոցային տնտեսություններով, քանի որ այստեղ ներդրված գումարը արագ է հետ վերադառնում և ավելի բարձր շահութաբերությամբ: Մյուս կողմից էլ, անասնապահությունը դժվար գործ է, և երիտասարդները խուսափում են դրանից:

Ավելի կայուն է մսի պահանջարկը: Եվ աշխատանքն էլ քիչ է: Գյուղացիները գարնանը իրենց ցուլիկները հանում են սար, հետո մեկ ձևեռ կերակրում, ու հաջորդ աշնանը մորթում, վաճառում են: Ամեն դեպքում, կաթի ու պանրի արտադրությունը այս տարածքում նվազում է՝ փոխարինվելով մսով, իսկ ավելի հաճախ՝ նոր այգիներով ու ջերմոցներով:

Գ. Հարակից ու օժանդակող ճյուղեր

Անասնապահական ծառայությունները մատուցվում են գյուղերում ապրող անասնաբույժերի կողմից: Մի կողմից լավ է, որ նույն տարածքում անասնաբուժ կա, բայց մյուս կողմից էլ նրանց գիտելիքների և

տեխնիկական հագեցվածության խնդիր կա: Արհեստական սերմնավորում, ինչպես նշվեց վերևում, Լուսաձորում և Սևքարում չի իրականացվում:

Գյուղերն հիմնականում ապահովված են գյուղատնտեսական տեխնիկայով: ՀՀՀ- ն և Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ԾԻԳ-ը տարբեր ծրագրերի շրջանակում տրամադրել են տեխնիկա՝ կոմբայն, որը ծառայում է նաև կից գյուղերին, տրակտորներ, հակավորող սարքավորումներ:

Հեռագնա արտոնների կառավարման ծրագրով նախատեսված է ոչ միայն բարելավել դեպի արտոններ տանող ճանապարհը, այլ նաև կառուցել կաթի ընդունման և պանրի արտադրության կետ: Սա պլանավորված է սկսել այս տարի:

Անասնապահության համար սարքավորումներ, դեղամիջոցներ և այլ պարագաներ մատակարարողներ տարածաշրջանում չկան:

Դ. Արտադրական գործունեության որակը

Այս տարածաշրջանում մարդիկ ավանդաբար զբաղվում են անասնապահությամբ: Իհարկե ակնհայտ է, որ այն նվազող ճյուղ է և նման ձևով անասնապահությունը ապագա չունի այստեղ: Բնական պայմանները և հեռագնա ընդարձակ արտոնները լավ նախադրյալ են անասնապահության զարգացման համար, բայց դրան խոչընդոտում են և՛ աշխատանքի բարդությունից երիտասարդների խուսափելը, և՛ շահութաբերության ցածր մակարդակը՝ համեմատած այլ ճյուղերի հետ:

Անասնապահության ֆինանսավորման միակ ընդունելի տարբերակը կառավարության կողմից սուբսիդավորվող վարկերն են, որոնք էլ սահմանափակ են և չեն կարող նպաստել ճյուղի զարգացմանը:

Նոր տեխնոլոգիաների ու գիտելիքի տրամադրման կենտրոններ չկան: Որոշ աշխատանք իրականացնում են Տավուշ հիմնադրամն ու Վորլդ Վիժնը, սակայն ոլորտի նվազող շահութաբերությունն ու մարդկանց մոտիվացիայի պակասը այս ջանքերը անարդյունավետ են դարձնում:

Ոլորտի զարգացման համար էական են Հեռագնա արտոնների կառավարման ծրագրի պլանավորված գործողությունները, սակայն կարիք կա ստեղծվող արտադրամասի և հավաքման կետի համար կառավարման արդյունավետ մոդել մշակել, ինչպես նաև մշակված գործողությունները ժամանակին իրականացնել:

Ե. Առաջարկություններ անասնապահության զարգացման ուղղությամբ

- Բարձրացնել գյուղացիների տեղեկացվածությունը արհեստական սերմնավորման և անասունների կերակրման արդյունավետության վերաբերյալ: Տարվա մեծ մասը թերսնված անասունների կաթնատվությունը տարածաշրջանում չի անցնում 2000 լիտրը: Միաժամանակ պետք է տարածքում աշխատող անասնաբույժերի վերապատրաստում անցկացվի և նրանց տրվի համապատասխան սարքավորումներ ունենալու հնարավորություն:
- Հեռագնա արտոններում պետք է լուծվի էլեկտրաէներգիայի մատակարարման, ճանապարհների բարեկարգման հարցը, որը նախատեսված է ԳԲԱ ԾԻԳ- ի ծրագրով:

- Հեռագնա արտավայրում կաթի ընդունման և վերամշակման կետի գործարկումը կարող է էապես փոփոխել անասնապահության պատկերը տարածաշրջանում: Ուղղակի անհրաժեշտ է մշակել դրա գործարկման արդյունավետ մոդել՝ հիմնված մասնավոր շահի ու սեփականության վրա:
- Հեռագնա արտոներում կթի տաղավարների կարիք կա (Սևքար, Դիտավան), քանի որ անձրևոտ եղանակին կթվող կաթի մաքրությունը բավարար չէ:
- Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում անասնապահական ռեսուրսային կենտրոնի կառուցման պահանջարկ կա, ինչպես CARD հիմնադրամը դա արել է Սառնակունքում, Ստեփանավանում և այլուր:
- Էական է լուծել ֆերմերների ֆինանսավորման խնդիրը: Ներկայում սուբսիդավորվող վարկերի առավալագույն գումարը հնարավորություն չի ընձեռում ընդլայնված վերարտադրության: Ցածր տոկոսադրույքով և մինչև տասը միլիոն դրամի վարկերը կարող են նպաստել ոլորտի մեքենայացմանը և մոդեռնացմանը, ինչպես նաև ժամանակակից ֆերմերային տնտեսությունների ի հայտ գալուն: Այս առումով թիրախ կարող են հանդիսանալ այն տնտեսությունները, որոնք արդեն ունեն ավելի քան քսան գլուխ խոշոր եղջերավոր անասուն և ցանկանում են փոխել ցեղատեսակը, բարելավել գոմային պայմանները, մեքենայացնել կիթը, խտաբաղը և այլն:

4. Դաշտավայրություն

Տարածաշրջանում զարգացած է եգիպտացորենի ու ծախսխոտի արտադրությունը: Մի կողմից դրան նպաստում է ջրովի վարելահողերի, մյուս կողմից՝ աջակից մեծ ձեռնարկությունների առկայությունը :

Եգիպտացորենը Դիտավանում ու Լուսաձորում աճեցնում են դեռևս խորհրդային ժամանակներից: Հիմա նոր ու ավելի արդյունավետ սորտերի օգտագործումը ավելացրել է բերաբատությունն, ու մարդիկ ավանդական ցորենը փոխարինել են եգիպտացորենով: Եգիպտացորենը մի կողմից օգտագործվում է որպես անասնակեր՝ հենց տարածաշրջանում, սակայն կան նաև գնորդներ այլ մարզերից, հատկապես՝ մեծ թռչնաբուծական տնտեսությունները: Հայաստանում արտադրվող եգիպտացորենը մասնակի է բավարարում ներքին պահանջարկը: Բարձր բերքատվությամբ սորտերի կիրառման դեպքում ինքնարժեքը ցածր է ստացվում և իրացման խնդիր չի առաջանում:

Ծխախոտը այստեղ աճեցվում է International Masis Tabac (ԻՄՏ) ընկերության աջակցությամբ: Ընկերությունը տրամադրում է աջակցության ամբողջական փաթեթ: Սկզբում գյուղացուն տրամադրվում է կանխավճար՝ հողային աշխատանքների համար, ապա՝ սածիլներ: Դաշտային աշխատանքների ինքնարժեքը նվազեցնելու և հասանելի դարձնելու համար ընկերությունը ստեղծել է տրակտորային պարկեր: Տարածաշրջանում գործում է ընկերության չորանոցը, որն արտադրված ծխախոտի մթերոդն է: Դիտավանում է ծխախոտի սածիլներ արտադրող ամենամեծ տնտեսությունը, որի արտադրանքը իրացվում է ամբողջ մարզի տարածքում:

Ցորեն մշակում են բոլոր համայնքներում: Այն հատկապես մշակվում է անջրդի վարելահողերում: Մարզի մյուս համայնքների հետ համեմատած՝ բերքատվությունը բարձր է Դիտավանում՝ 3-4 տոննա մեկ հեկտարից: Այստեղ օգտագործում են կառավարության տրամադրած սերմացուն, սուբսիդավորվող պարարտանյութն ու վառելիքը: Քիչ չեն նաև այն տնտեսությունները, որ օգտվում են սուբսիդավորվող վարկերից: Ու քանի որ համայնքները սահմանամերձ են, վարկի տոկոսադրույքը չի անցնում տարեկան 8%-ը: Մյուս համայնքներում ցորենի բերքատվությունը մոտ է մարզի միջինին՝ 2 տոննա տարեկան:

Ա. Մշակաբույսերի արդյունավետության համեմատական վերլուծություն

Ցորենի մշակման դեպքում, երբ բերքատվությունը 2 տոննա է մեկ հեկտարից, շահութաբերությունը ստացվում է 100- 120 հազար դրամ: Իսկ առաջատար տնտեսությունները, որոնց բերքատվությունը հասնում է մինչև 4 տոննա, ստանում են մեկ հեկտարից մինչև 350 հազար դրամ շահույթ: Անջրդի պայմանների համար դա ներկայում լավագյուն հնարավորությունն է:

Ծխախոտի դեպքում օգտագործվում են ջրովի վարելահողեր: Այստեղ միջին բերքատվությունը հասնում է 15 տոննայի, իսկ մեկ հեկտարի շահութաբերությունը՝ մոտ 400 հազար դրամ: Առաջատար տնտեսությունները, որոնք մեծ տարածքների վրա են ծխախոտ աճեցնում և օգտագործում են ժամանակակից գիտելիք ու տեխնոլոգիաներ, ստանում են մինչև 25 տոննա բերք և ավելի քան մեկ միլիոն դրամ շահույթ մեկ հեկտարից:

Եգիպտացորենի բերքատվությունն ուղղակի կախված է սորտից: Սովորական սորտերի բերքատվությունը 7-8 տոննա է մեկ հեկտարից, իսկ հիբրիդներինը՝ մինչև 12 տոննա: Հիբրիդային սորտերը հիմնականում օգտագործվում են որպես անասնակեր և դրանց գինը շուկայում ավելի ցածր է: Եգիպտացորենը վաճառվում է ինչպես կանաչ, այնպես էլ չոր- հատիկ տարբերակով: Ընդհանուր առմամբ, մեկ հեկտարից միջինը ստացվում է ավելի քան մեկ միլիոն դրամ շահույթ:

Եգիպտացորենի և ծխախոտի շահութաբերությունը գրեթե նույնն է, սակայն ծխախոտը ավելի աշխատատար և ռիսկային է, նաև՝ պահանջում է սկզբնական ավելի մեծ ներդրումներ: Այս առումով եգիպտացորենի արդյունավետ սորտերի օգտագործումը ավելի արդյունավետ է, քան ծխախոտագործությունը, նամանավանդ, որ Հայաստանը թոչնի կերի ներկրող է հանդիսանում: Մյուս կողմից, ԻՄՏ ընկերության ակտիվ քայլերը նվազեցնում են գյուղացիների ռիսկը և սկզբնական պահանջվող ներդրումները, ավելի արագ են ապահովում կանխիկի հոսքը: Հետևաբար, երկու մշակաբույսերի աճեցումն էլ զուգահեռ հնարավոր է ավելացնել, մեկը՝ ի հաշիվ իր արդյունավետության և բարձր շահութաբերության, մյուսը՝ ի հաշիվ աջակից ընկերության (ԻՄՏ) ջանքերի և արժեքային շղթայի ամբողջականության:

Ցորենը չի մրցակցում նախորդ երկու մշակաբույսերի հետ՝ այն աճում է անջրդի պայմաններում, ավելի քիչ աշխատանք և սկզբնական ներդրում է պահանջում և հնարավոր է աճեցնել ուղղակի սահմանամերձ տարածքներում: Աջակից կազմակերպությունների կողմից ստեղծված գյուղատնտեսական տեխնիկայի պարկը նույնպես նպաստում է ցորենի և եգիպտացորենի մշակման ծավալների ավելացմանը:

Բ. Նախաձեռնություններ դաշտավարության զարգացման ուղղությամբ

- Եզիպտացորենի և ցորենի արդյունավետ ստրտերի ներկրում և տրամադրում գյուղացիներին:
- Եզիպտացորենի իրացման հնարավորությունների ընդլայնում թռչնաբուծական ընկերությունների հետ արդյունավետ կապերի հաստատման միջոցով:
- Անասնապահության մեջ լրացուցիչ կերերի օգտագործման ուղղությամբ բացատրական աշխատանք, դասընթացներ, օրինակելի ֆերմաների ստեղծմանն աջակցություն:
- Անասնակերի արտադրության զարգացում՝ ֆինանսական և տեխնոլոգիական աջակցման գործիքներով:

Շնորհակալություն ենք հայտնում համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

